



Հաստատված է՝

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի խորհրդի 11.12.2012 թ. № 14-Ա որոշմամբ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ  
ՍԱՄՎԵԼ ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԳՅՈԶԱԼՅԱՆԻ  
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ԳՐԱՎՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
(AMICUS CURIAE)**

**№ 14-12-Ա**

ք.Երևան

11.12.2012 թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդին առընթեր գիտա-վերլուծական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) խորհուրդը<sup>1</sup>, մասնակցությամբ համակարգող Արա Ջոհրաբյանի, քարտուղար Իրինա Փիլոյանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի վերլուծության հարցերի հանձնաժողովի նախագահ Վահե Գրիգորյանի, Պալատի ներքին իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գրիգորյանի,

քննարկելով ՀՀ սահմանադրական դատարանում քննության ընդունված «Քաղաքացի Սամվել Մնացականյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասի և 158-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» և «Քաղաքացի Գևորգ Գյոզալյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի և 158-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» միավորված գործերով ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

տալիս է սույն գրավոր մեկնաբանությունները հետևյալի մասին.

<sup>1</sup> Սահմանադրական արդարադատության հարցերի հանձնաժողովի նախագահ Արտակ Զեյնալյանը և նորմատիվ իրավական ակտերի փորձաքննության հարցերի հանձնաժողովի նախագահ Գևորգ Գյոզալյանը սույն գրավոր մեկնաբանության քննարկմանը չեն մասնակցել:

**Հարցի կարևորությունը.**

Սույն հարցը կարևոր դերակատարություն ունի անձի արդար դատաքննության, դատարանի մատչելիության, օրենքով ստեղծված անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունքների իրականացման տեսանկյունից:

Սույն միավորված գործերով դիմողների կողմից քննարկման առարկա է դարձել արդարադատության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակին և նրա կողմից ընդունվող ակտերի բնույթին վերաբերող իրավադրությունները:

Խնդրո առարկա է հանդիսանում այն հարցադրումը, թե՛ արդյո՞ք արդարադատության խորհրդի տվյալ կարգավիճակը համապատասխանում է օրենքով ստեղծված դատարանի չափանիշներին, և արդյո՞ք արդարադատության խորհրդի որոշումները հանդիսանում են դատական ակտեր:

**Միջամտությունների (մեկնաբանությունների շրջանակը).**

Քննարկվող նորմերի սահմանադրականության հարցը լուծելու նպատակով Կենտրոնը փորձ է կատարել վերլուծել «դատարան» և «արդարադատություն» եզրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը:

Կենտրոնը սույն մեկնաբանության շրջանակներում անհրաժեշտ է համարել պարզել հետևյալ հարցադրումները՝

– *ի՞նչ սահմանադրաիրավական բովանդակություն ունեն «դատարան» և «արդարադատություն» իրավական եզրույթները,*

– *արդյո՞ք ՀՀ արդարադատության խորհուրդը հանդիսանում է դատարան և օժտված է դատարանին ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքով նախատեսված չափանիշներին:*

– *արդյո՞ք վիճարկվող նորմերով նախատեսված իրավական կարգավորումը չի սահմանափակում արդարադատության մատչելիության իրավունքը:*

**I. Վիճարկվող նորմի մեկնաբանությունը.**

1. Սույն գործերով Դիմողների կողմից վիճարկվում են հետևյալ իրավական նորմերը.

***Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մաս (Արդարադատության խորհրդի ակտերը և դրանց ընդունման կարգը).***

6. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Արդարադատության խորհրդի որոշումները, ինչպես նաև դատավորին կալանավորելու, նրա լիազորությունները դադարեցնելու, նրան որպես մեղադրյալ

ներգրավելու, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին Հանրապետության Նախագահին առաջարկ ներկայացնելու վերաբերյալ Արդարադատության խորհրդի որոշումները վերջնական են, ուժի մեջ են մտնում Արդարադատության խորհրդի նիստում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չեն: Այդ որոշումները ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» և դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

2. **155-րդ հոդվածի 5-րդ մաս և 6-րդ մաս (Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը).**

5. Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1) վճռաբեկ դատարանի որոշումը, որով հաստատվել է, որ արդարադատություն իրականացնելիս գործը կամ հարցը ըստ էության լուծելիս կայացվել է ակնհայտ ապօրինի դատական ակտ, կամ արդարադատություն իրականացնելիս դատավորը թույլ է տվել դատավարական օրենքի նորմերի ակնհայտ և կոպիտ խախտում.

2) անձի դիմումը.

3) պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի հաղորդումը.

4) Դատարանների նախագահների խորհրդի էթիկայի հանձնաժողովի միջնորդությունը.

5) դատական պրակտիկայի ամփոփման կամ ուսումնասիրման արդյունքներով կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի հայտնաբերումը.

6) վարույթ հարուցող անձանց կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի ինքնուրույն հայտնաբերումը:

7) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի կողմից կայացված դատական ակտը, որով հաստատվել է, որ տվյալ գործը քննելիս Հայաստանի Հանրապետության դատարանը թույլ է տվել Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրով սահմանված՝ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում:

3. 6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով նախատեսված դիմումը, հաղորդումը կամ միջնորդությունը, որ չի պարունակում դատավորի կողմից կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսացող արարքի կատարման մասին առերևույթ հիմքեր, առանց քննության

վերադարձվում է դրանք ներկայացնող անձին:

4. **158-րդ հոդվածի 1-ին մաս (Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկի քննությունը).**

1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս Արդարադատության խորհուրդը գործում է որպես դատարան: Որպես դատարան գործելիս Արդարադատության խորհրդում գործերի քննության կարգի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարական օրենսգրքի նորմերն այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Արդարադատության խորհրդում գործի քննության նկատմամբ և չեն հակասում սույն օրենսգրքի նորմերին:

**ա) «դատարան» և «արդարադատություն» իրավական եզրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը.**

5. ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի առաջին պարբերությունը սահմանում է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ *օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:*
6. Նշված սկզբունքը, որպես սահմանադրական կարգի հիմունք, առաջ է բերում պետական իշխանության «սահմանափակման» գաղափարը, որն իրականացվում է իշխանության երեք ճյուղերի փոխադարձ զսպման և հակակշռման միջոցով:
7. Ժողովրդավարական պետությունում կարելի է առանձնացնել իշխանության տարանջատման սկզբունքի հետևյալ հիմնական նպատակները՝
  - բացառել իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ մարմնի ձեռքում,
  - ստեղծել արդյունավետ համակարգ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորման և պաշտպանության համար:
8. ՀՀ Սահմանադրության 6-րդ գլուխը նվիրված է դատական իշխանությանը, որն իրականացվում է հատուկ կարգավիճակ ունեցող պետական մարմինների՝ դատարանների կողմից:
9. Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունների կարգավորումը ՀՀ Սահմանադրության

հիման վրա իրականացվում է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով, որն ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին:

10. ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում է դատարանակազմությունը, դատական իշխանության գործունեության սկզբունքները, դատարանի բնականոն գործունեության ապահովման երաշխիքները, դատավորի կարգավիճակը և դատավորի վարքագծի կարգավորմանն ուղղված իրավական նորմեր, այդուհանդերձ, օրենսգիրքը չի մեկնաբանում *«դատարան»* և *«արդարադատություն»* իրավական եզրույթները:
11. ՀՀ սահմանադրության մեկնաբանություններում *«դատարան»* եզրույթը բնորոշվում է որպես իրավաբանական իմաստով բարդ և բազմակողմանի նշանակություն ունեցող հասկացություն, որը ՀՀ օրենսդրության մեջ օգտագործվում է մի քանի իմաստներով՝
- 1) Դատարանն ընկալվում է որպես պետության մարմինների համակարգում հատուկ տեղ զբաղեցնող և հատուկ կարգավիճակ ունեցող *պետական մարմին*, որն անկախ և ինքնուրույն է պետական իշխանության այլ ճյուղերի մարմիններից և Սահմանադրությամբ ու օրենքներով լիազորված է իրականացնելու դատական իշխանություն, այդ թվում՝ արդարադատություն: Դատարանը՝ որպես պետական իշխանության մարմին, կազմված է օրենքով սահմանված կարգով նշանակված (ընտրված) դատավորներից, ովքեր գործում են պրոֆեսիոնալիզմի հիման վրա:
    - 2) «Դատարան» հասկացությունն ընդգրկում է նաև դատական համակարգի կառուցվածքային միավորները՝ *ատյանները և օղակները*, որոնցից յուրաքանչյուրը նշելու համար օգտագործվում է «դատարան» եզրույթը, ինչը ցույց է տալիս դրա տեղը և կարգավիճակը դատական համակարգում:
    - 3) «Դատարան» հասկացության իրավաբանական իմաստներից մեկն էլ բացահայտում է *դատական կազմը* (միանձնյա կամ կոլեգիալ), որն օրենքի համաձայն իրավասու է քննելու և լուծելու կոնկրետ գործը:<sup>2</sup>
12. «Դատարան» եզրույթի յուրօրինակ մեկնաբանություն է տալիս Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում: Մասնավորապես՝ Եվրոպական դատարանն իր նախադեպային պրակտիկայում դատարան եզրույթը մեկնաբանելիս առաջ է բերում Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված է

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 896-897:

արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունը կազմող չափանիշներ:

13. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:...*

14. Նշված իրավական նորմի վերլուծությունից կարելի է առանձնացնել դատարանին վերագրվող հետևյալ հատկանիշները՝

**ա) օրենքի հիման վրա ստեղծված դատարան.** Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն այս բառակապակցությամբ նախատեսված մարմինը այն մարմինն է, որի գործառույթն է՝ սահմանված կարգով անցկացված դատավարությունների արդյունքում՝ իր լիազորության սահմաններում, օրենքի գերակայության հիման վրա լուծել հարցը:<sup>3</sup> Ընդ որում՝ այդ մարմինը պետք է պարտադիր որոշումներ կայացնելու իրավունք ունենա:<sup>4</sup> Եվրոպական դատարանը զարգացրել է այն դիրքորոշումը, որ մարմինը, որը լոկ խորհուրդ է առաջարկում, չի կարող «դատարան» դիտվել, նույնիսկ, եթե գոյություն ունի այնպիսի պրակտիկա, ըստ որի հետևում են այդ խորհրդին:

Կոնվենցիայում ամրագրված և Եվրոպական դատարանի կողմից զարգացված «*օրենքով ստեղծված*» դատարանի պահանջի նպատակն այն է, որ դատարանի կազմակերպումը պետք է կարգավորվի օրենքով, այլ ոչ թե՛ գործադրի հայեցողությամբ:<sup>5</sup>

Դատարանի՝ օրենքի հիման վրա ստեղծված լինելու չափանիշն իր հերթին սերտորեն կապված է ինչպես դատարանի՝ որպես պետական իշխանության մարմնի, կազմավորման գործընթացի հետ, այնպես էլ դատարանի՝ գործի քննության իրականացման իրավասության չափանիշի հետ: Դատարանի իրավասության շրջանակը պետք է բնորոշվի օրենքով:

**բ) անկախ դատարան.** «Անկախ» դատարանն այն դատարանն է, որն անկախ է կողմերից և գործադրից: Եվրոպական դատարանն արձանագրել է, որ որոշելու համար,

<sup>3</sup> Բեյլիուսն ընդդեմ Շվեյցարիայի, 1988:

<sup>4</sup> Սրամեկն ընդդեմ Ավստրիայի, 1984:

<sup>5</sup> Լավենթսն ընդդեմ Լատվիայի, 2002:

թե արդյո՞ք մարմինը կարող է «անկախ» համարվել՝ պետք է, *inter alia*, նկատի առնել դրա անդամների նշանակման ձևը, պաշտոնավարման ժամկետը, կողմնակի ճնշումների դեմ երաշխիքների գոյությունը և այն հարցը՝ արդյո՞ք անկախությունը ներկայանալի է:

գ) **անաչառ դատարան**. Դատարանի «անաչառ» լինելու պահանջը որոշ չափով համընկնում է նրա՝ կողմերից և իշխանություններից անկախ լինելու պահանջի հետ: Դա հավասարապես կիրառվում է և՛ քաղաքացիական, և՛ քրեական գործերի համար: Եվրոպական դատարանն այս հարցում երկու չափանիշ է նախատեսել. որոշելով՝

ա) արդյո՞ք դատարանը **սուբյեկտիվորեն** անաչառ է այն իմաստով, որ դրա անդամները ազատ են անձնական կանխակալությունից, և

բ) արդյո՞ք **օբյեկտիվ տեսակետից** անաչառության բավարար տեսանկյունից գոյություն ունի և արդյո՞ք տվյալ իրավիճակում անաչառության երաշխիքները բացառում են հարցի առնչությամբ ցանկացած օրինական կասկած:

Սուբյեկտիվ չափանիշի հետ կապված Եվրոպական դատարանը նշել է, որ այն իր մեջ ներառում է տվյալ գործում տվյալ դատավորի անձնական համոզմունքի մեջ համոզվելու ճիգերը: Ընդ որում՝ դատարանի սուբյեկտիվ (անձնական) անաչառությունը պետք է ենթադրվի, քանի դեռ հակառակը չի ապացուցվել:

Օբյեկտիվ անաչառության վերաբերյալ Եվրոպական դատարանի դիրքորոշումը մեծ մասամբ հիմնված է այն համոզման վրա, որ «արդարադատությունը» ոչ միայն պետք է իրականացվի, այլև՝ տեսանելի լինի, որ այն իրականացվում է: **Պիեռուսկն ընդդեմ Բելգիայի** (1982թ.) գործով Դատարանը որոշեց, որ ներպետական դատարանները պետք է հասարակությանը համոզմունք ներշնչեն:

դ) **ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննություն իրականացնող դատարան**. Այստեղ Եվրոպական դատարանն առանձնացրել է երկու չափանիշ՝ **արդար դատաքննություն իրականացնող դատարանին** և **հրապարակային դատաքննություն իրականացնող դատարանին**:

«Արդար դատաքննության» իրավունքը 6-րդ հոդվածի հիմնարար տարրն է: «Արդարացիության» պահանջը վերաբերում է դատավարություններին ամբողջությամբ, այլ ոչ թե միայն բանավոր կամ առաջին աստիճանի լսումներին: Այն հարցին՝ արդյո՞ք անհատն «արդար» դատաքննություն է

ստացել, պետք է մոտենալ՝ նկատի ունենալով ամբողջ դատավորության ընթացքը:

«Արդար դատաքննություն» հասկացությունը պահանջում է մրցակցային դատավարություն, որտեղ քաղաքացիական դատավարության կողմերը հնարավորություն ունեն իմանալու կամ դիտողություն անելու ներկայացված դիտարկումների և մյուս կողմի ներկայացրած ապացույցների վերաբերյալ:

Որպեսզի մրցակցային գործընթացն արդյունավետ լինի, քաղաքացիական և քրեական դատավարությունում կարևոր է, որ գործին առնչվող փաստաթղթերը հասանելի լինեն երկու կողմերին էլ:

Դատարանին բնորոշ հատկանիշներից կարևորվում է նաև վերջինիս կողմից *հրապարակային դատաքննություն* իրականացնելու հանգամանքը: Հրապարակային դատաքննության *առաջին տարրը* դատարանում կողմի ներկայության իրավունքն է, *երկրորդը*՝ լսումների արդյունավետ մասնակցության՝ կողմի իրավունքը, *երրորդը*՝ լսումների հրապարակային բնույթի իրավունքը, այն է՝ կողմի իրավունքը՝ պահանջելու, որ հանրությունը, ներառյալ՝ լրատվամիջոցները, թույլատրվեն մասնակցել դատական դռնբաց նիստին, իսկ *չորրորդը*՝ որոշումը հրապարակելու դատարանի պարտականությունն է:

15. Եթե ամփոփենք Կոնվենցիայով և Եվրոպական դատարանի կողմից դատարանի համար սահմանված չափանիշները, դատարան եզրույթը բնութագրվում է որպես արդարադատություն իրականացնող մարմին, որն այդ նպատակին կարող է հասնել միայն այն պարագայում, երբ ստեղծվել է օրենքի հիման վրա, անկախ է, անաչառ և ողջամիտ ժամկետում իրականացնում է արդարացի և հրապարակային դատաքննություն:
16. «Դատարանը» արդարադատության մարմին է, որը իր իրավասության սահմաններում իրավունքի նորմերի հիման վրա լուծում է որոշակի հարցեր՝ սահմանված գործընթացին համապատասխան<sup>6</sup>:
17. Ինչ մեկնաբանություն էլ որ փորձենք տալ «դատարան» եզրույթին, այդուհանդերձ, նրա գլխավոր սահմանադրական գործառույթը և գործունեության նպատակը մնում է արդատադատության իրականացումը:

<sup>6</sup> Բեյլիսոսն ընդդեմ Շվեյցարիայի, 1989թ.:



18. «Արդարադատությունը» Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է ***միայն դատարանը*** (ընդգծումը մերն է)՝ դատական համապարտադիր որոշումների օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խստագույն պահպանմամբ՝ համապատասխան դատավարական ձևերով, և ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական գործեր քննելուն և լուծելուն: Այսպիսով, ***արդարադատությունը՝ որպես դատարանների բացառիկ լիազորություն, համարվում է դատական իշխանության իրականացման եղանակը, միջոցը*** (ընդգծումը մերն է):<sup>7</sup>

19. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում արդարադատությունը բնորոշվում է հետևյալ իրավական դևույթներով՝

1/ ***Արդարադատությունը դատական իշխանության իրականացման եղանակներից մեկն է:***

2/ ***Արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ որպես պետության հատուկ մարմին:***

3/ ***Դատարաններն արդարադատությունն իրականացնում են Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:***<sup>8</sup>

20. Արդարադատության գործառույթի՝ միայն դատարանների կողմից իրականացնելու հանգամանքն ուղղակիորեն նախատեսված է նաև ՀՀ Սահմանադրությամբ: Մասնավորապես՝ Սահմանադրության 91-րդ հոդվածը սահմանում է. ***«Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:***

***Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:»:***

21. ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածի համաձայն՝

***Հայաստանի Հանրապետությունում գործում են սահմանադրական դատարանը, ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ:***

***Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու***

<sup>7</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 897:

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 899:

*օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:*

*Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:*

***բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհրդի կարգավիճակը.***

22. Ինչպես վերը նշվեց, սույն մեկնաբանության նպատակներից է պատասխանել այն հարցադրմանը, թե արդյո՞ք ՀՀ արդարադատության խորհուրդը հանդիսանում է դատարան և օժտված է դատարանին ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև՝ Կոնվենցիայով և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով նախատեսված չափանիշներին:

23. ՀՀ Սահմանադրության մեջ արդարադատության խորհրդին վերաբերող դրույթներն ամրագրված են դատական իշխանության գլխում:

24. ՀՀ Սահմանադրության 94.1 հոդվածը սահմանում է՝

*Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է արդարադատության խորհուրդը:*

*Արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով օրենքով սահմանված կարգով ընտրված ինը դատավորներ, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ:*

*Արդարադատության խորհրդի նիստերը վարում է վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:*

25. Արդարադատության խորհրդի լիազորությունները սահմանվում են Սահմանադրության 95-րդ հոդվածով, համաձայն որի՝

*Արդարադատության խորհուրդն օրենքով սահմանված կարգով՝*

*1) կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջիադասման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները.*

*2) եզրակացություն է տալիս ներկայացված դատավորների թեկնածությունների վերաբերյալ.*

*3) առաջարկում է վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և մասնագիտացված դատարանների նախագահների*

*թեկնածությունները.*

4) *Հանրապետության Նախագահի հարցմամբ կարծիք է հայտնում ներման հարցերի վերաբերյալ.*

5) *դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:*

26. Նշված սահմանադրաիրավական նորմերը սահմանելով արդարադատության խորհրդի ձևավորման կարգն ու լիազորությունների շրջանակը, դրան չեն վերապահում արդարադատություն իրականացնելու գործառույթ:
27. Ավելին, արդարադատության խորհուրդը չի պատկանում ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետությունում գործող դատարանների շարքին, հետևաբար՝ վերջինիս որպես դատարան հանդես գալու հանգամանքը Կենտրոնը **խնդրահարույց** է դիտում:
28. Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունը նախատեսում է դատական իշխանության կազմակերպման և իրականացման մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք վերաբերում են բացառապես դատական իշխանության մարմին հանդիսացող և արդարադատություն իրականացնող դատարաններին: Մասնավորապես՝ **դատարանների անկախության** (հոդված 94), **դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անփոփոխելիության** (հոդված 96), **արդարադատություն իրականացնելիս դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անկախության** (հոդված 97) **սկզբունքները:**
29. Կենտրոնը գտնում է, որ Դիմողների կողմից բարձրացված խնդիրը անհրաժեշտ է դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 91-րդ հոդվածի 2-րդ պարբերության համատեքստում համաձայն որի՝ **դատական որոշումները, վճիռները և դատավճիռները ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:**
30. Վերոնշյալ սահմանադրաիրավական դրույթին համապատասխան՝ դատական ակտը կայացվում է հանուն Հայաստանի Հանրապետության, և օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն ձեռք է բերում կարևոր իրավական

հատկանիշ՝ դառնում է պարտադիր և ենթակա կատարման:

31. Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում անդրադարձ է կատարել դատական ակտերի կատարմանը, ինչի կապակցությամբ նշել է, որ դատական ակտի որոշակիությունը կապված է դատական ակտի կատարման հետ: Մասնավորապես *«Ցանկացած դատարանի կողմից կայացրած որոշման կատարումը, դիտվում է որպես արդար դատական քննության անբաժանելի տարր՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով»*<sup>9</sup>:
32. Այս տեսանկյունից արդարադատության խորհրդի որոշումը դատական ակտ չէ, այն չի կայացվում հանուն Հայաստանի Հանրապետության և չի կրում պարտադիր բնույթ:
33. Նման հանգամանքը վկայում է այն մասին, որ արդարադատության մատչելիության սահմանադրական պահանջը հաշվի առնելով անձը պետք է այն վիճարկելու և դրա իրավաչափությունը ստուգելու հանարավորություն ունենա:

**Եզրակացություն.**

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը փաստում է, որ արդարադատությունն իրականացվում է պետական իշխանության մաս կազմող դատական իշխանության, մասնավորապես՝ դատարանների կողմից, և որևէ այլ մարմին օժտված չէ արդարադատություն իրականացնելու գործառույթով:

Սույն սահմանադրական գործով բարձրացված իրավակարգավորման պարագայում բախվում ենք այնպիսի իրավական խնդրի հետ, որի պարագայում ՀՀ Սահմանադրությամբ դատական իշխանության մեջ չմտնող և արդարադատություն իրականացնելու գործառույթով չօժտված մարմինը հանդես է գալիս որպես դատարան, և որի որոշումները դուրս են դատական վերահսկողության ոլորտից:

Համակարգող՝

Արա Զոհրաբյան

քարտուղար՝

Իրինա Փիլոյան

<sup>9</sup> Հորնսթայն ընդդեմ Հունաստանի, 1997թ.: